GP MANAGEMENT ADVISORY

ԱՍՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Թողարկման եվ վարկանիշավորման պետական աջակցության ծրագիր

01. Ո՞մ կարող է հետաքրքել

Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին, որոնք ունեն ներգրաված բանկային վարկեր կամ պարտավորություններ կամ ուզում են ներգրավել պարտավորություններ՝ պարտատոմսերի տեղաբաշխման միջոցով:

02. Ո՞րն է օժանդակության բնույթը

Օժանդակությունը տրամադրվում է՝

- Պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխման ծավալի 2 տոկոսի չափով, բայց ոչ ավել քան 30 մլն ՀՀ դրամը
- Հրապարակային առաջարկով տեղաբաշխված պարտատոմսերի ծավալի 3 տոկոսի չափով, բայց ոչ ավել քան 45 մլն ՀՀ դրամը պարտատոմսերի՝ 12 ամիս շրջանառության համար:

Օժանդակության ձևերի և դրանց մանրամասների վերաբերյալ ներկայացված է 4-րդ բաժնում:

03. Որքա՞ն կարող է կազմել Ձեր օժադակության առավելագույն գումարը պարտատոմսերի թողարկումից

3 տարվա ընթացքում ծրագրից **առավելագույն օգուտը** կարող է կազմել 165 մլն ՀՀ դրամ, որից 135 մլն ՀՀ դրամը շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի անվանական ծավալից և 30 մլն դրամը միանվագ պարտատոմսերի թողարկումից:

GP MANAGEMENT ADVISORY

04. Օժանդակության ձևերը՝ առավել մանրամասն

Գործարքի տեսակ	*Օժանդակության ձեվը*	*Օժանդակության գումար* *Հաշվարկված 1,5 մլրդ դրամ թողարկման համար*	*Պայման*
Պարտատոմսերի թողարկում	• Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և բորսայում ցուցակման գործընթացի ավարտից հետո մեկանգամյա օժանդակություն՝ տեղաբաշխման անվանական արժեքի 2 տոկոսի չափով, սակայն ոչ ավելի, քան երեսուն միլիոն դրամը	**30 մլն** ՀՀ դրամ	Առնվազն 36 ամիս շրջանառության ժամկետով հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսեր, որոնք ցուցակվելուց հետո ունեն շուկա ստեղծող
	• Պարտատոմսերի շրջանառության համար տեղաբաշխման անվանական ծավալի **3-ական տոկոսի** չափով օժանդակություն առաջին երեք տարիների համար, սակայն ոչ ավելի, քան 45 միլիոն դրամը շրջանառության յուրաքանչյուր 12 ամիսների համար:	**45 մլն** ՀՀ դրամ **3 տարում 135 մլն** ՀՀ դրամ	
Բաժնետոմսերի թողարկում	Բաժնետոմսերի թողարկման, տեղաբաշխման և բորսայում ցուցակման համար օժանդակություն յուրաքանչյուր շահառուի համար միայն մեկ անգամ, ընդ որում, փոխհատուցվում են փաստացի կատարված և համապատասխան փաստաթղթերով հիմնավորված ծախսերի 80%-ը, սակայն ոչ ավելի, քան հիսուն միլիոն դրամը: Նշված ծախսերը ներառում են արտաքին աուդիտի, բանկային և բորսայական ծառայությունների ծախսերը՝ կապված թողարկման, տեղաբաշխման և բորսայում ցուցակման հետ:	<**50 մլն** ՀՀ դրամ	Հրապարակային առաջարկի միջոցով թողարկված բաժնետոմս
Վարկանիշի ստացում	Ֆիթչ (Fitch), Ստանդարտ ընդ Փուրս (Standard and Poor's), Մուդիզ (Moody's) կամ Սքոփ Ռեյթինգզ (Scope Ratings) վարկանիշային գործակալություններից (այսուհետ՝ միջազգային վարկանիշային գործակալություններ) վարկանիշի ստացման և սպասարկման առաջին տարվա ծախսերի փոխհատուցում 50%-ի չափով		«Ֆիթչ», «Մուդիզ», «Ստանդարտ ընդ Փուրս» կամ «Սքոփ Ռեյթինգզ» միջազգային վարկանիշային գործակալություններից որևէ մեկից պետության սուվերեն վարկանիշից երկու նիշ ցածր միջազգային վարկանիշի ստացում

05. Ի՞նչ ծավալի պարտատոմս կարող եք թողարկել

Հրապարակային տեղաբաշխման պարտատոմսերի ծավալի սահմանափակում առկա չէ: Առկա է սահմանափակում առավելագույն օժանդակության մասով, որով թե միանվագ և թե տոկոսային ծախսի մասով սպասարկման համար առավելագույն ուղենիշ Կառավարության կողմից վերցված է **1,5 մլրդ** ՀՀ դրամը:

06. Ի՞նչ ենք առաջարկում մենք

Նախացուցակում

- Ընկերության բիզնես մոդելի ուսումնասիրություն, բիզնես պլանի կազմում, ցուցակմանը պատրաստվածության գնահատում, ազդագրի համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում,
- Ընկերության ֆինանսավորման կառուցվածքի, աղբյուրների օպտիմալացում, թողարկվող արժեթղթերի կառուցվածքի և հատկանիշերի սահմանում,
- Իրավական վերակազմավորման կամ ընկերության իրավական փաստաթղթերի փոփոխության վերաբերյալ խորհրդատվության մատուցում՝ անհրաժեշտության դեպքում,
- Արտաքին աուդիտ անցնելու համար ֆինանսական հաշվետվությունների կազման և ներքին տեղեկատվության հավաքագրման և հաշվառման համապատասխանության ապահովման խորհրդատվություն,
- Ներքին հսկողության համակարգերի և հաշվետվողականության համակարգերի ներդրում,
- Ցուցակման համար անհրաժեշտ ներքին կարգավորումների մշակում,
- Կորպորատիվ կառավարման համակարգի ներդրում, խորհրդի կազմի ձևավորման աջակցություն,
- Ընկերության տեսանելիության բարձրացման, բրենդինգի և մարկեթինգային արշավների վերաբերյալ ռազմավարության մշակում,
- Տեղաբաշխողի/շուկա ստեղծողի և այլ գործընկերների ընտրության աջակցություն,
- Պոտենցիալ ներդրողների հետ հարաբերությունների հաստատում՝ ցանկալի է

Տեղաբաշխման և ցուցակման գործընթաց

- Ազդագրի և հարակից փաստաթղթերի կազմում, Ազդագրի գրանցման գործընթացի կազմակերպում,
- Արժեթղթերի թողարկմամբ պայմանավորված կորպորատիվ գործողությունների փաստաթղթերի պատրաստում, արժեթղթերի գրանցման գործընթացի աջակցություն՝ ըստ անհրաժեշտության,
- Տեղաբաշխողի/շուկաստեղծողի հետ գործողությունների կանոնակարգում,
- Մարկեթինգային գործողություններին աջակցություն,
- Տեղաբաշխման իրականացման աջակցություն՝ ըստ անհրաժեշտության,

- Ցուցակման փաստաթղթերի պատրաստում, գործընթացի կազմակերպում,

Հետցուցակում

- Հաշվետու թողարկողների համապատասխանության ապահովում
    - Ընթացիկ և պարբերական բացահայտվող տեղեկատվության պատրաստման աջակցություն, այդ թվում Կառավարման մարմինների հաշվետվությունների պատրաստում,
    - Այլ պահանջների պահպանման աջակցություն,
- Կորպորատիվ կառավարման սկզբունքների պահպանման աջակցություն, կորպորատիվ կառավարման հաշվետվության պատրաստում,
- Ընկերության ժողովների և խորհրդի նիստերի անցկացման աջակցություն, իրավական սպասարկում և փաստաթղթավորում,
- Ներդրողների հետ հարաբերությունների կազմակերպում: